

164.

Ա-23

Մ 284

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն .

Ս Ա Շ Մ Ա Ն Ա Գ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Յ Ո Ց

1860





144.  
Ա-23

342.4  
Ա-23

ՍՏՈՒԳՎԱԾ 1901

Ե Ձ Գ Ե Յ Ի Ն

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Ց

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

1860

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

66061

~~30.054~~

ՍՏՈՒԳՎԱԾ 1901  
287

11162

Ի Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ե Ա Ն

Տ. ՄԱՏԹԷՆՍԻ

ՄՐԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի Պ Ա Տ Ր Ի Ա Ր Բ Ո Ւ Թ Ե Ա Ն

ՊՈՏԱՆԴՆՈՒՊՈՒՄԻ

Յ. ՍԱՐԳՍԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

~~93441~~





**Պատրիարքական կնքով չը փակեցա-  
նալ օրինակաց ճշգրտութիւնը երաշխա-  
ւորեալ է՛ն:**

1. Բարձրագոյն կնքով հաստատուած է Երևանի  
 2. Երևանի քաղաքի քաղաքապետարանի կողմէն  
 3. Երևանի քաղաքի քաղաքապետարանի կողմէն  
 4. Երևանի քաղաքի քաղաքապետարանի կողմէն  
 5. Երևանի քաղաքի քաղաքապետարանի կողմէն  
 6. Երևանի քաղաքի քաղաքապետարանի կողմէն  
 7. Երևանի քաղաքի քաղաքապետարանի կողմէն  
 8. Երևանի քաղաքի քաղաքապետարանի կողմէն  
 9. Երևանի քաղաքի քաղաքապետարանի կողմէն  
 10. Երևանի քաղաքի քաղաքապետարանի կողմէն

# Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Ս Ե Տ Մ Ե Ն Ե Գ Բ Ո Բ Բ Բ Ե

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔ

Ե.

Այս քաղաքի ամեն մէկ անհատը առ Եզգը պարտաւորութիւններ ունի. Եզգն ալ իր կողմէն առ ազգային ամեն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի. դարձեալ ամեն մէկ անհատ իրաւունքներ ունի Եզգէն և Եզգն անհատներէն.

Եյս պարտիքներն որոշող և այս իրաւունքները հաստատող իշխանութիւնը ազգային Արչութիւն կը կոչվի, որում Օսմանեան Տէրութենէն յատուկ արտօնութեամբ յանձնեալ է Տաճկաստանի Հայոց ներքին գործոց անօրէնութիւնը.

Բ.

Եզգային Արչութիւնը հիմնեալ է իրաւանց ու պարտեաց սկզբունքին վրայ, որ արդարութեան սկզբունք է. իր ոյժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ, որ օրինաւորութեան սկզբունք է. Եմենայն անօրէնութիւն ազգային որ չ'է համաձայն սոյն սկզբանց, ո՛չ արդար է և ո՛չ օրինաւոր.

Գ.

Եզգն ու ազգային Արչութիւնը փոխադարձ պարտիքներով կապված են իրարու հետ.

Դ.

Ազգայնոց պարտականութիւնն է՝ Ազգին պիտոյիցը պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւրը իր կարողութեան չափովը, Ազգին խնդրած ծառայութեանցը յանձնառու ըլլալ, և ազգային Մարչութեան ըրած անօրէնութեանցը ազգասիրաբար հնազանդիլ:

Ե.

Ազգային Մարչութեան պարտականութիւնն է՝ Ազգին բարոյական, մտաւորական և նիւթական պիտոյիցը հոգ տանիլ, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնները անխախտ պահել, մարդկութեան հարկաւոր եղած անհրաժեշտ գիտելեաց ուսումը Ազգին ամեն աստիճանի թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ տղայոց հաւասարապէս ծաւալել, ազգային հաստատութիւնները պայծառ պահել. Ազգին հասոյթները օրինաւոր կերպով աւելցնել և ծախքերը իմաստութեամբ անտեսել, Ազգին ծառայութեանը մշտնջենապէս նուիրեալ անձանց կացութիւնը լաւցնել և ապագան անդորրել, կարօտելոց խնամ տանիլ հայրաբար, ազգայնոց մէջ ծագած վէճերը արդարութեամբ լուծադրել, և վերջապէս Ազգին բարեկարգութեանն ու յառաջադիմութեանը աշխատութիւն չը խնայել:

Զ.

Ահա այս ամեն պարտիքները կատարելու և իրաւունքները ապահովելու դիտմամբ է որ Ազգը հետեւեալ կերպով կը սահմանադրէ զազգային գործոց վարչութիւնը:

## Ազգային

1. Բարձրագոյն Վրասն շնորհած արածունութեանը համեմատ

Ազգային Ա արչութիւնը երեսփոխանական է .

Ազգը ընդհանուր ժողովով մը կը ներկայանայ և անոր միջնորդութեամբ կը վարէ զազգային իշխանութիւնը .

Ընդհանուր ժողովը՝ Ազգին ընդհանրական գործոց սնորէնութիւնն իրեն պահելով, սովորական գործոց վարչութիւնը երկու ազգային ժողովներու կը յանձնէ, կրօնական գործոց մասը՝ Արօնական ժողովի մը, քաղաքական գործոց մասը՝ Բաղաքական ժողովի մը . իսկ խառն գործոց սնորէնութիւնը՝ այս երկու ժողովոց առժամանակեայ մէկ տեղ գալովը ձեւացած Խառն ժողովին կը յանձնէ :

2. Ազգային վարչութիւնը՝ աշխատութեանց բաժանումը բարեկարգութեան առաջին պայման բռնելով, ազգային գործոց մէջ տեսչութիւնն ու մատակարարութիւնը իրարմէ կը զատէ երկու կարգ խորհուրդներու միջոցով :

Տեսչութեան համար՝ ազգային գործոց գլխաւոր մասերուն յատկացեալ չորս ազգային խորհուրդ կը հաստատէ, որ են՝ Ուսումնական խորհուրդ, Տնտեսական խորհուրդ, Արմօական խորհուրդ, Վատաստանական խորհուրդ, և վաւերագործութիւնն իրեն պահելով այս խորհուրդներուն իւրաքանչիւրին ձեռնհասութեանը կը յանձնէ ազգային գործոց այս իւրաքանչիւր մասին տեսչութիւնը :

X Մատակարարութեան 'համար' Պօլսի մէջ Թաղական խորհուրդները կը հաստատէ Թաղին եկեղեցւոյն անուամբը, և ամէն մէկ Թաղին տեղական գործոց և հաստատութեանց մատակարարութիւնը իր Թաղական խորհրդին կը յանձնէ, Ազգային խորհրդոց տեսչութեանը տակ:

3. Ազգային վարչութեան պաշտօնական գլուխ՝ Պօլսի Պատրիարքն է, և կեդրոն՝ Պօլսի Պատրիարքարանը:

Ազգային ժողովներն ու խորհուրդները իրենց գլուխներն ընտրելով Ազգին Պատրիարքը՝ Պօլսի մէջ ազգային Վարչութեան կենդրոնական մասը կը կազմեն, որոյ իշխանութիւնը բոլոր Տաճկաստանի Հայոց վրայ կը տարածվի:

4. Ազգային կենդրոնական Վարչութիւնը Տաճկաստանի առաջնորդանիստ գաւառներուն մէջ կը ներկայանայ Վաւառական ժողովներով, որոնք Պօլսէ դուրս Ազգային վարչութեան գաւառական մասը կը կազմեն որոյ պաշտօնական գլուխ՝ վիճակին Առաջնորդն է, և կեդրոն՝ տեղին Առաջնորդարանը:

5. Վաւառական վարչութիւնը նոյն փոխադարձ պարտեօք կազմած է գաւառաբնակ ազգայնոց հետ, ինչպէս կեդրոնական Վարչութիւնը ընդհանուր ազգայնոց հետ, և իրեն յարացոյց պիտի բռնէ ըզ կեդրոնական Վարչութիւնը:

6. Վաւառական վարչութիւնը առաջնորդանիստ քաղաքներու մէջ Արօնական և Քաղաքական ժողովներ կը հաստատէ և անոնց կը յանձնէ գաւառին կրօնական և քաղաքական գործոց տեսչութիւնը:

Այս ժողովները քաղաքին Թաղերուն մէջ Թաղական խորհուրդներ կը հաստատեն իրենց վերատեսչութեանն ու համարառութեանը տակ և անոնց ձեռքովը կը մատակարարեն տեղական գործերը, նոյն յարաբե-

բութիւններով որով կը վարվին Աեդրոնական ժողովները Պօլսի Թաղական խորհրդոց հետ :

Մանապէս իրենց վերատեսչութեանն ու համարառութեանը տակ Թեմական խորհուրդներ կը հաստատեն, և ամեն մէկ թեմին տեղական գործոց և հաստատութեանց մատակարարութիւնը իր Թեմական խորհրդին կը յանձնեն :

Պատասխանատուութիւն

7. Իւրաքանչիւր ժողով և խորհուրդ իր մասին մէջ ձեռնհաս է՝ համարատուութեան պայմանով :

Պաւառական վարչութեան մէջ՝ Թաղական ու Թեմական խորհուրդները համարատու են Պաւառական ժողովներուն, Պաւառական ժողովները համարատու են գաւառական Բնդհանուր ժողովներուն, Պաւառական վարչութիւնը կեդրոնական Աւարչութեան համարատու է, և Եռաջնորդը Պատրիարքին :

Աեդրոնական վարչութեան մէջ՝ Պօլսի Թաղական խորհուրդները համարատու են ազգային Տեսուչ խորհուրդներուն ըստ իւրաքանչիւր մասին : Տեսուչ խորհուրդները համարատու են ազգային Բաղադրական ժողովին՝ բաց ի Վատաստանական խորհուրդէն որ համարատու է Խտան ժողովին :

Արօնական ու Բաղադրական ժողովները և Պատրիարքը Բնդհանուր ժողովին համարատու են :

Բնդհանուր ժողովը բարոյապէս պատասխանատու է Եզդին առջև :

Յարաբերութիւն

8. Եզգային վարչութեան՝ Եզդին հետ, Երարատեան մայր Եթոսին հետ, Բարձրագոյն Դրան հետ ունեցած յարաբերութիւնները սա սկզբանց վրայ հիմնեալ պիտի ըլլան :

Ազգին և ազգայնոց հետ՝ միշտ հայրաբար վարվել,  
 Երարատեան մայր Աթոռին հետ՝ աւանդապահ  
 մնալ միշտ նոյն յարաբերութեանց որոնցմով նախնեաց  
 մէ անտի կապիւած են իրարու հետ Ազգն ու Աթոռը:  
 Բ. Գրան՝ հետ թէ Ազգին և թէ ազգայնոց կրօնա-  
 կան ու քաղաքական իրաւունքները պահպանելու  
 համար Տէրութեան պաշտպանութիւնը խնդրել, և  
 Ազգին հպատակութիւնը հաւատարիմ պահել առ  
 Տէրութիւնը:

Սոյն յարաբերութեանց միջնորդ Պատրիարքն է:

#### 4. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

##### Ա. Ազգային Ընդհանուր Ժողով

✱ 9. Ազգային Բնդհանուր Ժողովը կը բաղկանայ 220  
 ազգային երեսփոխաններէ որոնցմէ 160—ը Պօլսի Թա-  
 ղերուն եկեղեցեաց կողմէն ընտրեալ, և 60—ը առաջ-  
 նորդանիստ գաւառներուն կողմէն ընտրեալ:

Բնդհանուր Ժողովին մէջ ազգային երեսփոխանաց  
 անդամակից են:

Նախ՝ աղղային կեդրոնական Արչուութեան ան-  
 դամներէն՝ Արօնական ու Քաղաքական Ժողովներուն  
 և չորս Տեսուչ խորհուրդներուն անդամներն ու Թա-  
 ղական խորհուրդներուն ատենապետները:

Այս կարգի անդամոց թիւը իբր 100 է. բայց  
 այս թիւը երեսփոխանաց թիւին վրայ ճշդիւ չը կրնար  
 աւելցվել, վասն զի ասոնց մէջ արդէն երեսփոխան  
 ընտրվածներ ալ կրնան գտվիլ:

Երկրորդ՝ Ազգին կամ Տէրութեան ծառայութեանը  
 մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք որոնց ար-  
 Ժանաւորութիւնը Ազգին կամ Տէրութեան կողմէն

վիայեալ կը համարվի, ինչպէս են Ակեղեցական դասէն՝ Պօլիս գտնող եպիսկոպոսները, Պօլիս եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերեցները. Ուսումնական դասէն՝ ազգային մատենագիրներ, վկայեալ բժիշկներ, գլխաւոր դասատուներ, լրագրապետներ. Քաղաքական դասէն՝ վերին պաշտօնաւորաց աստիճանակիցներ, արքունի ժողովոց անդամներ, Ռ. Գրան դիւաններուն մէջ տնօրէններ և թարգմանապետներ, ազգային կամ արքունի հաստատութեանց մէջ տնօրէններ, ուսումնապետներ. Օլիւորական դասէն՝ վերին ըսպայից աստիճանակիցներ:

Այս կարգի անդամոց թիւն ալ չը կրնար ճշտովի վերոյիշեալ պատճառով, բայց իբր ըսկզբունք՝ այս երկու կարգի անդամոց բովանդակ թիւը երբէք չը պիտի հաւասարի երեսփոխանաց թիւին (1):

10. Բնդհանուր ժողովը է՛ն շատը 400 էն աւելի անդամ չը պիտի ունենայ, և քանի որ երեսփոխանաց մեծագոյն մասը այսինքն 111-ը գոնէ ներկայ չ'ըլլայ՝ նիստ չը՝ պիտի կարենայ ընել:

11. Բնդհանուր Ժողովին պաշտօնն է՝ Ազգին կողմէն երեսփոխանութեամբ ազգային բարձր պաշտօնաւորները ընտրել, Ազգային ժողովները կարգել, անոնց վարչութեանը համարառու ըլլալ, և ազգային ծանր կամ ընդհանրական գործերը վճռաբար տնօրինել:

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային Սահմանադրութեան ըսկզբունքները անխախտ պահել և անոնց տրամադրութեանցը համեմատ վարվիլ:

12. Բնդհանուր ժողով կը գումարվի:

Նախ՝ կանոնաւորապէս ամէն տարի մարտ ամսին

1 Այս յօդուածը վերաքննելի է երբ թէ՛ ազգային և թէ՛ Տէրութեան պաշտօնաւորաց թիւը այն աստիճան աւելնայ որ քնկարելի ըլլայ սոյն համեմատութիւնը պահել:

վերջերը ազգային Արչութեան տարեկան ընդհանուր համարատուութիւնը մտիկ ընելու, ազգային ժողովականաց կէսին ընտրութիւնն ընելու և ազգային տարեկան տուրքին տնօրէնութիւնը հաստատելու համար: Սոյն տարեկան նիստին մէջ վարչութեան անդամները՝ տուրքի խնդիրէն զատ՝ միւս խնդիրներուն մէջ խօսք միայն ունին և ոչ քուէ:

27. Վաթուղեկոսի ընտրութեան մասնակից ըլլալու համար:

37. Երուսաղէմայե Պօլսի Պատրիարքաց ընտրութեանը համար:

47. Արօնական ու Քաղաքական ժողովոյ մէջ կամ Պատրիարքին ու ժողովոյ մէջ պատահած անհամաձայնութեանց համար: Սոյն պարագայից մէջ ալ Արչութեան անդամները խօսք միայն ունին և ոչ քուէ:

57. Եզգային Սահմանադրութեան վերաքննութեանը համար:

Եւ վերջապէս արտաքոյ կարգի պատահած այն պիսի ծանր խնդիրներու համար զորոնք Եզգային ժողովները Ընդհանուր ժողովով որոշել հարկաւոր դատեն:

13. Ընդհանուր ժողով կը հրաւիրեն, նախ՝ Պատրիարքը՝ Եզգին կողմէն, երկրորդ՝ Ընդհանուր ժողովին ատենապետը՝ սոյն ժողովին ղիւանին կողմէն, երրորդ՝ Արօնական կամ Քաղաքական ժողովին ատենապետները՝ սոյն ժողովոց կողմէն:

#### Բ. Պատրիարք

14. Պատրիարքը Եզգային ժողովոց նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ:

15. Պատրիարքը իրեն եկած ամեն գործ՝ ո՛ր

ժողովին՝ ձեռնհասութեանը տակ է նէ՛ նոյն ժողովին՝ քննութեանն ու որոշմանը պիտի յանձնէ, և ազգային որոշմանց մէջ իր պաշտօնական գրութիւնքը անվաւեր պիտի համարվին եթէ ձեռնհաս ժողովին կողմէն ալ կնքեալ կամ ստորագրեալ չ'ըլլան. իսկ երբ ըստիպօղական գործ մը պատահի որոյ տնօրէնութիւնը չը ներէ սպասել մինչև ժողովոց գումարման օրը և արտաքոյ կարգի ժողով գումարել կարելի չ'ըլլայ, Պատրիարքը կրնայ ինքնին տնօրինել՝ պատասխանատուութիւնը իր վրայ առնելով, բայց եղելութիւնը կանոնաւոր կերպով միշտ արձանագրել տալով ձեռնհաս ժողովին պէտք է որ իմացնէ առաջնկայ նիստին մէջ զանի վաւերացնել տալու համար:

16. Պատրիարքը իր բացակայութեան ատեն Ազգային ժողովներու մէջ տրված որոշում մը չ'ըստորագրած՝ իրաւունք ունի դիտօղութիւն ընելու և խնդիրը կրկին քննութեան առնել տալու. իսկ երկրորդ որոշումէն ետքը պարտաւորեալ է ստորագրելու՝ եթէ այն որոշումը Սահմանադրութեան տրամադրութեանցը անհամաձայն չը գտնէ:

17. Պատրիարքը իրաւունք ունի Սահմանադրութեան տրամադրութեանցը համեմատ չը վարվող ազգային գործակալ մը, այսինքն՝ եկեղեցական մը, վարժապետ մը, եկեղեցւոյ, վանքի, դպրատան կամ հիւանդանոցի մատակարար մը, իր պաշտօնէն հանելու կամ արդիւլելու առաջարկութիւն ընել որում որ անկ է:

18. Պատրիարքը իրաւունք չ'ունի Ազգային ժողովները կամ խորհուրդները ինքնին լուծելու. բայց երբոր տեսնէ թէ սոյն ժողովները Սահմանադրութեան հակառակ ընթացքի մը մէջ են, առջին անգամին՝ անոնց ատենապետին հետ կը բանակցի բացատրութիւն ուղելու համար. երկրորդին՝ գրով իմաց քիուտայ նոյն ժողովին իր ապօրինաւոր ընթացքը և ի կարգ կը հը-

րաւիրէ զանի . իսկ երրորդին՝ Բնդհանուր ժողով կը կոչէ եթէ ամբաստանելին Ազգային ժողովներէն մէկն է , կամ Քաղաքական ժողովին կը դիմէ եթէ խորհուրդներէն մէկն է , և պատճառներն իմացնելով ամբաստանեալ ժողովին լուծումը կը պահանջէ .

19 . Պատրիարքը ազգային անտուկէն իրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ , և Պատրիարքարանին ներքին մատակարարութեան պահանջած ծախքը իր վրայ ըլլայ .

#### Գ . Ազգային Կրօնական Ժողով

20 . Կրօնական ժողովը 14 բանիբուն եկեղեցականներէ կը բաղկանայ .

21 . Կրօնական ժողովին պաշտօննէ՝ ազգային կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնը .

Իր պարտաւորութիւնքն են՝ Ազգին մէջ կրօնական զգացումը զարգացնել , Հայաստանեայց Ս . Ե . կեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնքը անխախտ և անարատ պահել , եկեղեցեաց և եկեղեցականաց բարեկարգութեանը հսկել , քահանայից կացութիւնը լաւցնելու և օպագան անդորրելու հոգ անիլ , արժանաւոր ու բանիբուն եկեղեցականներ հասցնել , և Ազգին մէջ ծագած կրօնական վէճերը քննել ու լուծել .

22 . Երբ պատահի կրօնական այնպիսի ծանր խնդիր մը զոր Կրօնական ժողովը չը կարենայ լուծել , Բնդհանուր ժողովին բազմական դովոզ եկեղեցականաց հետ համագումար ժողով պիտի կազմէ . եթէ այն համագումար ժողովն ալ իր ձեռնհասութենէն վեր դատէ ըզ խնդիրը , Արարատեան Մայր Աթոռին պէտք է դիմէ .

23 . Թէ մայրաքաղաքիս և թէ զաւանդուր մէջ վարդապետի և քահանայի ձեռնադրութեան հրամանը Կրօնական ժողովէն կը տրվի .

24. Քանի որ եկեղեցւոյ մը ժողովուրդը աւելի քահանայի մը հարկաւորութիւնը չըզայ և թաւազական խորհրդին միջնորդութեամբը չը խնդրէ, նոյն թաղին եկեղեցւոյն համար քահանայի ձեռնադրութեան հրաման չը պիտի տրվի:

25. Պօլսի եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերեցները Արօնական ժողովը կ'որոշէ, և Պատրիարքը կ'անուանէ:

26. Արօնական ժողովին սրբազան պարտաւորութիւնն է հակել որ՝ հոգեւոր պաշտօնները ձրի կատարվին և հոգեւոր պաշտօնեայք եկեղեցիէն ապրին:

#### Դ. Ազգային Քաղաքական ժողով

27. Քաղաքական ժողովը<sup>20</sup> քաղաքագէտ աշխարհականներէ կը բաղկանայ:

28. Քաղաքական ժողովին պաշտօնն է՝ ազգային քաղաքական գործոց ընդհանուր վերատեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային խորհուրդներուն կողմէն իրեն մատուցված ազգօգուտ առաջարկութիւնները ուշի ուշով քննել և կարեւորութիւնը յայտնրվելէն ետքը հաստատել զանոնք և անոնց գործադրութեանը արգելքները՝ եթէ կան՝ բառնալու հոգ տանիլ, և Ազգին բարեկարգութեանն ու յառաջադիմութեանը ըստ ամենայնի փոյթ ունենալ:

29. Քաղաքական ժողովը իրեն եկած գործերը՝ որ խորհրդին վերաբերեալ է նէ, նոյն խորհրդին քննութեանը պէտք է յանձնէ, և անոր կարծիքը չ'առած չը տնօրինէ:

30. Քաղաքական ժողովը կրնայ՝ բանաւոր պատճառով մը՝ չը հաստատել կամ ետ ձգել խորհրդի մը բրած որոշումը, բայց՝ անոր ձեռնհասութիւնը յարգելով չը պիտի կարենայ նոյն որոշման ներհակ որոշում և գործադրութիւն ընել:

31. Քաղաքական ժողովը իրաւունք չ'ունի զԱզգային խորհուրդներէն մէկը լուծելու, քանի որ Սահմանադրութեան տրամադրութեանցը հակառակ ընթացքի մէջ չը տեսնէ զանի: Իսկ եթէ պատահի այսպիսի պարագայ մը, առջի անգամին՝ անոր ատենապետէն բացատրութիւն կ'ուզէ, երկրորդին՝ զրով իմաց կուտայ խորհրդին և կարգի կը հրաւիրէ զանի, իսկ երրորդին կը լուծէ. բայց Բնդհանուր ժողովին տրվելու տարեկան տեղեկագրին մէջ այս լուծման պատճառները պէտք է որ բացատրէ:

32. Երբ պատահի քաղաքական այնպիսի ծանր խնդիր մը զոր քաղաքական ժողովը իր ձեռնհասութեանէն վեր դատէ, Բնդհանուր ժողովին պէտք է որ դի մէ

#### Ե. Ազգային Ռատմնական խորհուրդ

33. Ուսումնական խորհուրդը 10 ուսումնական աշխարհականներէ կը բաղկանայ:

34. Ուսումնական խորհրդին պաշտօնն է՝ ազգային դաստիարակութեան ընդհանուր տեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնքն են՝ ազգային վարժարանաց բարեկարգութեանը հսկել, ազգային դաստիարակութեան ընդհանուր հիմնադիր մը և դպրոցական կանոններ հաստատել, և անոնց համեմատ՝ ազգային վարժարանաց մէջ միօրինակ ընթաց մը որոշել թէ ուսման և թէ ուսուցման, սկզբնական դիտելեաց ուսում մը ծաւալել, աղջկանց դաստիարակութեանը յատուկ կերպով հոգ տանիլ, սոյն նպատակով հաստատեալ ընկերութեանց խրախոյս տալ և ձեռնտու ըլլալ, ազգային դաստիարակաց կացութիւնը լաւցնելու և ասպիտան անդորրելու խնամ տանիլ, Ազգին մէջ բանիբուն դասատուներ հասցնելու և դպրոցաց ընտիր դասագիրքներ պատրաստելու փոյթ ունենալ:

35. Ուսումնական խորհուրդը պէտք է իր կողմէն

ամենայն ջան ի գործ դնել որ՝ թէ՛ Պօլսի և թէ՛ գաւառներու մէջ ամեն թաղ սկզբնական դաստիարակութեան դպրոցներ ունենան, նոյնպէս Պօլիս և առաջնորդանիստ քաղաքները մէյմէկ ազգային ուսումնարան ունենան դասական ուսմանց համար: Ընդ որ ուսումնարանէն վկայականով կ'ելնեն աշկերտները, և մասնաւոր ուսմունք ընօղներուն՝ դասատուութեան վկայագիր ալ կը տրվի:

36. Ուսումնական խորհուրդը կ'որոշէ ազգային վարժարանաց մէջ ընդունվելու դասագիրքներն ու դասատուները: Իսկ քրիստոնէական վարդապետութեան դասագիրքն ու դասատուն Արօնական ժողովէն պէտք է որ խնդրէ:

37. Ուսումնական խորհուրդը կը նախագահէ ազգային վարժարանաց տարեկան քննութեանը: Իսկ քրիստոնէական վարդապետութեան մասին քննութիւնը Արօնական ժողովին ձեռօքը կ'ըլլայ:

## Զ. Ազգային Տնտեսական խորհուրդ


38. Տնտեսական խորհուրդը 10 տնտեսագէտ աշխարհականներէ կը բաղկանայ:

39. Տնտեսական խորհրդին պաշտօնն է՝ ազգային հաստատութեանց և կալուածոց մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնը:

Իր պարտաւորութիւնն է՝ սոյն հաստատութեանց պայծառութեանն ու բարեկարգութեանը հոգ տանիլ:

40. Տնտեսական խորհուրդը վանօրէից և հիւանդանոցի համար մասնաւոր հոգաբարձութիւններ կը հաստատէ և անոնց միջնորդութեամբը կը մատակարարէ զայս հաստատութիւնները:

41. Վանօրէից հոգաբարձութիւնը եօթ հոգիէ կը բաղկանայ, որոնց երեքը եկեղեցական և չորսը աշխարհական:



Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ պայս հոգաբարձուները և Քաղաքական ժողովին հաւանութեամբը Պատրիարքը կ'անուանէ :

42. Սանօրէից հոգաբարձութեան նպատակը պիտի ըլլայ սոյն հաստատութեանց եկամուտներն ու հասոյթները Ազգին օգտին ծառայեցնել . նախ՝ վանօրէից մէջ ուսումնարան հաստատելով՝ Արօնական ժողովին և Ուսումնական խորհրդին հտուած հիմնադրին համաձայն , և որի մէջ որ պէտք կայ՝ հիւանդանոց , տպարան , Թանգարան :

43. Սանօրէից հոգաբարձութիւնը իւրաքանչիւր վանքի համար երկերկու գործակալ պէտք է ունենայ տեղացի , որոնք վանահօր նախագահութեամբը կը մատակարարեն ըզ վանքը՝ Վաւառական ժողովէն անկախ կերպով :

44. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը եօթ հոգիէ կը բաղկանայ որոնց երկուքը բժիշկ :

Տնտեսական խորհուրդը կ'ընտրէ այս հոգաբարձուները և Քաղաքական ժողովին հաստատութեամբը Պատրիարքը կ'անուանէ :

45. Հիւանդանոցի հոգաբարձութեան նպատակը պիտի ըլլայ սոյն հաստատութիւնը իր նպատակին ծառայեցնել , հոն տնօրինելով նախ՝ կանոնաւոր Հիւանդանոց մը աղքատ հիւանդաց համար . երկրորդ՝ Պատասպարան մը ծեր ու անկար աղքատաց համար . երրորդ՝ Օգաստարան մը անառակաց համար . չորրորդ՝ Արթարան մը որք ու անաէրունչ տղայոց համար :

Այս օթեվաններուն իւրաքանչիւրը թէ՛ շէնքի և թէ՛ կարգի կողմէն բժրշկական կանոնաց և ողջպահիկ օրինաց համաձայն պէտք է կարգադրեալ ըլլայ :

46. Ատակաց անօրէնութիւնը Տնտեսական խորհրդին կը վերաբերի . Այս խորհուրդը պէտք է հսկէ

որ ամէն կտակ օրինաւոր կերպով վաւերացեալ ըլլայ, կտակօղին դիտաւորութիւնը անխախտ պահվի և գործադրութիւնը ապահով ըլլայ:

Սոյն տրամադրութեանց համեմատ՝ կտակի վերաբերեալ յատուկ կանոններ ու մասնաւոր նորաբարձութիւն պէտք է հաստատէ Տնտեսական խորհուրդը:

Երբ կտակին գործադրութիւնը կտակօղին դիտաւորութեանը համեմատ չ'ըլլայ, ընտանիքը իրաւունք ունի բողոքելու:

47. Թէ՛ պօլսի և թէ՛ դաւառներու մէջ գտված ազգային անշարժ ըստացուածոց կալուածագիրներուն (իւնէր, Էնօնէր, Փերու) օրինակները Տնտեսական խորհրդին ձեռքով ժողվելով ազգային Վիւանատան մէջ պիտի պահվին ամենայն ապահովութեամբ:

48. Տնտեսական խորհուրդը պէտք է հսկէ որ ամեն ազգային ըստացուած օրինաւոր կալուածագիր ունենայ:

49. Ազգային ո՛ր և է կալուածի գնումն ու վաճառումը չը կրնար գործադրվիլ առանց Տնտեսական խորհրդին դիտութեանը, Բաղաքական ժողովին հաճութեանն ու Պատրիարքին կնքադրութեանը:

Սոյն տրամադրութեանց ուժովը փոփոխութեան ըսված բանը վերցած է:

50. Պօլսի մէջ և շրջակաները ազգային ո՛ր և է շէնութիւն կամ նորոգութիւն չը կրնար ըսկսիլ առանց Տնտեսական և Ելմտական խորհրդոց դիտութեանն ու Բաղաքական ժողովին հաճութեանը:

Մանապէս ազգային ո՛ր և է հաստատութեան համար ստակ չը կրնար ժողվելիլ առանց վերոյիշեալ պայմանին:

### Է. Ազգային Ելմտական խորհուրդ

51. Ելմտական խորհուրդը <sup>10</sup> հաշուագէտ աշխարհականներէ կը բաղկանայ:

52. Այնտեղից խորհրդին պաշտօնն է՝ ազգային հասութից և ծախուց ընդհանուր տեսութիւնը և ազգային սնտուկին համարակալութիւնը :

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային հաստատութեանց մատակարարութեան հաշիւները կանոնաւորապէս առնել, ծախուց օրինաւորութիւնն ըստուգել, ազգային եկամուտներն աւելցնելու ջանք ընել՝ այն աստիճան որ օր մը ազգային սնտուկին մուտն ու ելքը իրարու հաւասար գալով ընդհանուր տուրքը մեծապէս թեթեւայ :

53. Ազգային սնտուկին մուտքն են գլխաւորապէս՝ տարեկան ընդհանուր տուրք, կալուածական հասոյթ, դիւանական հասոյթ, կտակ, նուէր և այլն. ելքն են գլխաւորապէս՝ Պատրիարքարանի և Ղիւանատան ծախք, Հիւանդանոցի ծախք, կարօտեալ թաղերու եկեղեցեացն ու վարժարանացը նպաստ և այլ պատահական ծախքեր :

54. Ազգային սնտուկին հաշիւը տամարակալութեան կանոնով պիտի բռնրվի :

55. Այնտեղից խորհուրդը տարեգլխէն երկու ամիս առաջ յետագայ տարւոյն մէջ ըլլալու հասոյթն ու ծախքը կշռելով՝ հաշուեցուցակը Քաղաքական ժողովին պիտի ներկայացնէ :

## Ը. Ազգային Դատաստանական խորհուրդ

56. Դատաստանական խորհուրդը 10 իրաւասէր անձերէ կը բաղկանայ, որոնց հինգը եկեղեցական և հինգը աշխարհական :

57. Դատաստանական խորհրդին պաշտօնն է ազգային դատաստանական գործոց ընդհանուր տեսչութիւնը :

Իր պարտաւորութիւնն է՝ հակառակորդները արդարութեամբ իրաւաստի ընելու ջանալ և իր վճիռ-

ներուն հիմ րունել կրօնական մասին՝ նախնեացմէ աւանդեալ կանոնները, և քաղաքական մասին՝ Տէրութեան դատարանաց արդի կանոնները:

58. Արբ պատահի այնպիսի խնդիր մը զոր Պատաստանական խորհուրդը իր ձեռնհասութենէն վեր դատէ, ազգային ժողովներէն որու որ անկ է անոր կը զրկէ:

59. Պատաստանական խորհուրդին մէջ դատեալ անձ մը միշտ իրաւունք ունի Արօնական կամ Քաղաքական ժողովին բողոքելու կամ Խառն ժողով պահանջելու ըստ գործին:

Թ. Թաղական խորհուրդներ

60. Թաղական խորհուրդները կը բաղկանան ըստ տեղւոյն 5 էն մինչեւ 9 անդամներէ:

61. Թաղական խորհրդին պաշտօնն է՝ Թաղին տեղական գործոց մատակարարութիւնը, եկեղեցւոյն եկեղեցականութիւնը, դպրատան հոգաբարձութիւնը, աղքատաց խնամակալութիւնը, ազգայնոց մէջ պատահած վէճերուն քննութիւնն ու խաղաղարարութիւնը:

Ար պարտաւորութիւնն է՝ Թաղին եկեղեցւոյն պայծառութեանը խնամ տանիլ, Թաղին մէջ թէ աղջկանց և թէ տղայոց համար ըսկզբնական դաստիարակութեան բարեկարգ դպրատուններ ունենալու ջանք ընել, և Թաղին կարօտեալ ընտանեաց ձեռնտու ըլլալ:

62. Թաղերուն մէջ թէ եկեղեցւոյ և թէ դպրատան ո՛ր և է կալուած Թաղական խորհուրդին անմիջական տնօրէնութեանը տակ է. այսպիսի կալուածոց գնումն ու վաճառումը ըստ 49. Յօդ. կը գործադրվի:

63. Ամեն Թաղ մէյմէկ սնտուկ պիտի ունենայ Թաղական խորհրդին հսկողութեանը տակ:

Այս սնտուկին մուտքն են՝ Թաղական տուրքը, եկեղեցւոյ և դպրատան կալուածոց եկամուտները,

եկեղեցւոյն հասոյթները , աղքատաց համար եղած նուէրներն ու կտակները և այլն . ելքն են՝ Թաղին եկեղեցւոյն և դպրատանց ծախքերն ու աղքատաց օգնութիւնները .

64 . Ըմէն Թաղական խորհուրդ իր Թաղին մէջ եղած ծննդոց , ամուսնութեանց և վախճանմանց արձանագրութիւնը պէտք է որ ունենայ կանոնաւոր կերպով :

65 . Թաղական խորհուրդները իրենց պաշտօններուն մէջ Տեսուչ խորհուրդներուն հետ ուղղակի յարաբերութիւն ունին . եկեղեցւոյնութեան գործերու համար՝ Տնտեսական խորհրդին հետ , դպրատանց ուսումնական մասին համար՝ Աւուսումնական խորհրդին հետ , դրամական գործերու համար՝ Աւստահական խորհրդին հետ , դատական գործերու համար՝ Ղատաստանական խորհրդին հետ :

Թաղական խորհուրդը երբ չը կրնայ հակառակորդները իրաւախոհ ընել , գործը Ղատաստանական խորհրդին պէտք է ջրկէ իր քննութեան տեղեկագրով :

### Ժ. Ազգային Դիւանատուն

66 . Պատրիարքարանին մէջ դիւանատուն մը պիտի հաստատվի որոյ գործը պիտի ըլլայ ազգային պաշտօնական գրութեանց տնօրէնութիւնը :

67 . Դիւանատունը երեք գրասենեակի պիտի բաժնրվի .

ա . Թղթակցութիւն , որ Պատրիարքարանէն ղըրկրվելու գիրերուն և ի Պատրիարքարան հասած թուղթերուն կարգաւորութեանը կ'ըզբաղի :

բ . Արձանագրութիւն , որ ազգային ժողովոց և խորհրդոց վերաբերեալ թուղթերուն կարգաւորութեանը կ'ըզբաղի :

գ . Ազգահամար , որ ազգայնոց քաղաքային միճա-

կաղրութեանը՝ այսինքն ճննդեան, ամուսնութեան և վախճանման վերաբերեալ արձանագրութեանց կարգադրութեանը կ'ըզբաղի։ Սոյն գրասենեակէն կը տրուվին ազգայնոց թէ՛ ճամբորդութեան համար և թէ՛ առեւտրական գործողութեանց համար պէտք եղած վաւերական թուղթերը, նաև ճննդեան, ամուսնութեան և վախճանման վկայականները։

68. Թղթակցութեան գրասենեակը՝ ներքին և արտաքին թղթակցութեանց և թուրքերէն գրութեանց համար պէտք եղածին չափ դիւանադպիրներ պիտի ունենայ։ Ըյս գրասենեակը Պատրիարքին հրամանին ներքեւ է և ինք կ'անուանէ ասոր անդամները Քաղաքական Ժողովին հաւանութեամբ։

Արձանագրութեան գրասենեակը վեց զիւանադպիր պիտի ունենայ։ Երկուքը Արօնական ու Քաղաքական Ժողովներուն գործոցը յատկացեալ, և չորսը՝ Տեսուչ խորհուրդներուն գործոցը կարգեալ։

Ըյս գրասենեակին անդամները ամեն մէկը իր վերբերական Ժողովին կամ խորհուրդին հրամանին ներքեւ է, զորոնք նոյն Ժողովները կամ խորհուրդները կ'ընտրեն և Պատրիարքը կ'անուանէ Քաղաքական Ժողովին հաւանութեամբ։

Ազգահամարի գրասենեակը պիտի ունենայ նօսար մը, զոր Քաղաքական Ժողովը կ'ընտրէ և Պատրիարքը կ'անուանէ։

Ըյս գրասենեակներուն անդամներուն թիւը ըստ հարկին կ'աւելնայ կամ կը պակսի։

69. Դիւանատունը պիտի ունենայ զիւանապետ մը որ Դիւանատան բոլոր գործոցը անօրէն և պատասխանատու է, զոր Քաղաքական Ժողովը կ'ընտրէ և Պատրիարքը կ'անուանէ։

Դիւանապետը կ'ընէ Ընդհանուր Ժողովին դիւանապետութիւնը։

70. Ղիւանապետը պարտաւորեալ է տարին անգամ մը Պօլսի ամեն մէկ թաղէն և հինգ տարին անգամ մը ամեն մէկ գաւառէն իրենց ազգահամարին, այսինքն՝ Ճննդոց, ամուսնութեանց և վախճանմանց տամարներուն՝ օրինակները պահանջել և ազգային Ղիւանատան ընդհանուր ազգահամարին մէջ արձանագրել տալ:

71. Ղիւանապետը ազգային լեզուն քաջ գիտցող և տաճկերէնի ու ֆռանսերէնի բաւական հմտութիւն ունեցող անձ մը պէտք է որ ըլլայ. Նմանապէս Ղիւանադպիրները ազգային լեզուն քաջ գիտցող և իրենց մասին մէջ հմուտ անձինք պէտք է որ ըլլան:

72. Ղիւանադպիրները մասնաւորապէս պատասխանատու են իրենց վերբերական ժողովին կամ խորհուրդին առջեւ և ընդհանրապէս Ղիւանապետին առջեւ:

73. Ազգահամարի գրասենեակէն տրված օր և է թուղթ և վկայական՝ պատրիարքական կնքով և Ղիւանապետին ըստորագրութեամբը վաւերացեալ պէտք է ըլլան:

74. Ազգային Ղիւանատունը ամեն օր՝ ութ ժամ բաց և Ղիւանադպիրները ներկայ պիտի գտվին բաց ի տօնելի օրերէն: Աթէ տօնելի օր մը ժողով կամ խորհուրդ ըլլալ պատահի, նոյն ժողովին կամ խորհրդին Ղիւանապետը նոյն օրը ներկայ պէտք է գտվի:

## 2. ԳԱԻԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### Ա. Գաւառական Ընդհանուր ժողով

75. Գաւառներու մէջ ընդհանուր ժողով կը կազմվի թաղական և թեմական երեսփոխաններէ, ու

րոց անդամակից են նախ՝ գաւառին Արօնական և Քաղաքական ժողովներուն անդամներն ու Թաղական խորհուրդներուն ատենապետները, երկրորդ՝ Ազգին կամ տեղական իշխանութեան ծառայութեանցը մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք • (տես Յօդ 9) •

76. Գաւառական Տնդհանուր ժողովներուն պաշտօնն է՝ իւրաքանչիւրը իր գաւառին կողմէն երեսփոխանութեամբ գաւառին առաջնորդը ընտրել, Արօնական ու Քաղաքական ժողովները կարգել, անոնց վարչութեանը համարառու ըլլալ, և գաւառական ծանր կամ ընդհանրական գործերը տնօրինել •

#### Բ. Առաջնորդ

77. Առաջնորդը Գաւառական ժողովներուն նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ •

Իր պարտաւորութիւնն է՝ գաւառին մէջ ազգային Սահմանադրութեան գործադրութեանը հսկել •

78. Առաջնորդը չը պիտի կարենայ վանքերու մէջ բնակութիւն հաստատելով իր պաշտօնին գլխէն հեռանալ • այլ գաւառին գլխաւոր քաղաքին մէջ ազգային Առաջնորդարանը պիտի բնակի ուր կը գումարվին և գաւառական ժողովները •

79. Առաջնորդը գաւառական սնտուկէն իրեն յատկացեալ ամսական մը պէտք է ունենայ և Առաջնորդարանին ներքին մատակարարութեան ծախքը իր վրայ ըլլայ •

#### Գ. Գաւառական ժողովք և խորհուրդ

80. Գաւառացի Արօնական ու Քաղաքական ժողովները՝ ըստ տեղւոյն 7 էն մինչեւ 12 անդամներէ կը բաղկանան •

81. Պաւառաց թաղական և թեմական խորհուրդները ըստ տեղոյն 5 էն մինչև 9 անդամներէ կը բաղկանան :

82. Ամէն գաւառ իր Քաղաքական ժողովին հըս կողմ թեանը ներքեւ մէյմէկ գաւառական սնտուկ պիտի ունենայ գաւառին ազգային եկամտից և ծախուց անտեսութեանն ու համարակալութեանը համար . նմանապէս ամեն թաղ և թեմ իր սնտուկը պիտի ունենայ :

Այս սնտուկներուն համարակալութիւնը կանոնաւոր կերպով պիտի կատարվի :

83. Պաւառներու մէջ ամէն Առաջնորդարան իր գաւառական դիւանատունը պիտի ունենայ . նմանապէս ամէն թաղ և թեմ :

Պաւառական դիւանները պարտաւոր են գաւառին թաղական և թեմական ազգահամարները ժողովել և անոնցմով գաւառական ընդհանուր ազգահամար կազմել :

## Գ Լ ՈՒՆ Բ .

### Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Տ ՈՒ Ր Ք

84. Ամէն ազգային անհատ՝ որ չափահաս է և վաստակի տէր, պարտաւոր է ազգային պիտոյից պահանջած ծախքերուն մատնակից ըլլալ . բաց անոնցմէ որոնց կարողութիւն չունենալը իրենց թաղին կամ իրենց արհեստակցաց կողմէն վկայեալ է :

85. Ազգային տուրքը տարեկան է և բաշխման համար պիտի բռնրվի իւրաքանչիւրին կարողութիւնը :

86. Արհու կերպ է ազգային տուրքը . մէկը ընդ-

հանուր՝ որ ընդհանուր ծախուց յատկացեալ է և կը հաւքքովի Աեդրոնական վարչութեան կողմէն ազգային սնտուկին համար, և միւսը մասնաւոր՝ որ մասնաւոր ծախուց յատկացեալ է և կը հաւքքովի Թաղական խորհրդոց կողմէն Թաղական սնտուկին համար:

87. Պօլսի մէջ ընդհանուր տուրքին բաշխման ու հաւաքման եղանակը Քաղաքական ժողովին մէջ կ'որոշվի և Ընդհանուր ժողովով կը հաստատովի: Իսկ Թաղական տուրքը ամէն Թաղ իր խորհուրդին մէջ կ'որոշէ ու կը հաստատէ:

Սոյնպէս կը տնօրինվին և դաւառներուն մէջ գաւառական ընդհանուր տուրքն ու Թաղական մասնաւոր տուրքը:

88. Գաւառները մասնակից պիտի ըլլան ազգային ընդհանուր տուրքին:

Գաւառներուն կողմէն ազգային կեդրոնական սնտուկին տրրվելու մինչեւ ցարդ սովորութիւն եղած տարեկան տուրքին փոխարէն՝ գաւառական սնտուկը իր հաւաքած գաւառական ընդհանուր տուրքին հարիւրին այսքան պիտի տայ ազգային կեդրոնական սնտուկին:

Հարիւրին որքան տրրվելը Պօլսի Քաղաքական Ժողովը պիտի որոշէ:

## Գ Լ Ո Ւ Խ Գ.

### Ը Ն Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

#### Ա. Ընտրական օրէնք

##### 1. Ընտրողութեան պայմանք

89. Ընտրելու իրաւունքը լսան 28 տարւոյ հասակէն կ'ըսկսի:

90. Ընտրելու իրաւունքէն զրկեալ կամ արգիլեալ են դատաստանապէս :

Նախ՝ քրէական յանցանօք դատապարտեալ և հրապարակաւ նշաւակեալ անձինք, որոնք մեռեալ են քաղաքականապէս ըստ օրինաց Տէրութեան :

ՅԴ՝ Ազգային գործոց մատակարարութեանը մէջ նենգութեամբ բռնրված և ազգային ատեանի մը կողմէն դատապարտութիւն կրած անձինք, որոնց համար դատող ատեանը ազգային գործոց մէջ չը գործած վիլը վճռած ըլլայ :

ՅԵ՝ Տէրութեան կողմէն զգաստացուցիչ պատիժ կրած կամ ազգային զգաստարանէն ելած անձինք, որոնց ազգային ատեան մը արգիլած ըլլայ ընտրելու իրաւունքը : Այս արգելքը կը վերնայ երբոր այսպիսեաց կատարելապէս զգաստացեալ ըլլալը արգիլող ատեանին կողմէն վկայվի :

Ա՛՝ Խելագարութեան պատճառով անբաւական դատեալ անձինք, որոնց կատարելագէս առողջացեալ ըլլալը վաւերական կերպով վկայեալ չ'ըլլայ :

ՅԶ՝ Հարկ եղած ազգային տուրքը կարօղութիւն ունենալով մերժող անձինք, որոնք ազգովին եպերելի են իբր ազգային պարտեաց զանցառու : Այս արգելքը կը վերնայ երբ այսպիսիք ազգային այս անհրաժեշտ պարտականութիւնը ճանչել ըսկսին :

## 2. Ընտրելու իրաւունքի պայմանք

91. Ազգային գործոց անօրէնութեանը մէջ որոշողական ձայն ունենալու իրաւունքը լման 30 տարւոյ հասակէն կ'ըսկսի :

Ամենայն անհատ ազգային որ եռսուն տարին լրացուցած է և չ'է դատաստանապէս զրկեալ կամ արգիլեալ ազգային իրաւանց վայելումէն, ընտրելի է ազգային ո՛ր և է պաշտօնի համար :

## Բ. Ընտրութիւն ազգային երեսփոխանաց

92. Ընտրութեան հիմ պիտի բռնուիլն բնակչաց թիւը :

Պօլսի ամեն մէկ թաղին և ամեն մէկ գաւառին բնկած երեսփոխաններուն բաշխման ցուցակը յատուկ պատկերով պիտի նշանակուի :

Երեսփոխանաց բաշխման ցուցակը՝ ամեն հինգ տարին անգամ մը կը նորոգուի, ազգային Վիւանատան ընդհանուր ազգահամարին համաձայն :

Այս վերանորոգումը Արշութեան գլխաւոր անգամոց, այսինքն Արօնական ու Քաղաքական ժողովոց ատենապետներուն և Տեսուչ ու Մատակարար խորհրդոց ատենապետներուն մէկ տեղ գալովը նեւայած համախորհուրդ ժողովին մէջ կ'ըլլայ :

93. Թէ՛ Պօլսի թաղերէն և թէ՛ գաւառներէն ուղղված երեսփոխանները հարկ չ'է որ՝ ընտրող թաղին կամ գաւառին բնակիչներէն ըլլան, բաւական է որ Պօլսի մէջ բնակին, և ազգասիրութեան ու պատուաւորութեան մասին ընտրողաց համարումը ըստացած անձինք ըլլան :

Այս երեսփոխանները չէ թէ զերենք ընտրող թաղին կամ գաւառին երեսփոխանները կը սեպուին Ընդհանուր ժողովին մէջ, այլ Ազգին երեսփոխաններն են համապօր իշխանութեամբ :

## Ընտրողական ժողովներ

94. Ընդհանուր ժողովին լուծուելու օրէն երկու ամիս առաջ գաւառներուն՝ և մէկ ամիս առաջ Պօլսի թաղերուն կը ծանուցնէ Պատրիարքը ամեն մէկ թաղէն կամ գաւառէն ուղղված երեսփոխանաց թիւը և կը հրաւիրէ ընտրողական ժողով գումարել, յիշելով ընտ-

բերութեան պայմաններն ու ընտրութեան կանոնները :

Սոյն կոնդակին օրինակը թաղական խորհրդարանին մէջ բացադրեալ կը մնայ մինչեւ ընտրութեանց աւարտումը :

95. Ամէն թաղին մէջ ընտրողական ժողովներ կը կազմուին թաղին բնակիչներէն՝ երեսփոխանաց հետ անդամակից ըլլալու արժանաւորութիւննին արդէն վկայեալ (տե՛ս Յօդ. 9.) և ընտրողութեան պայմաններն ունեցող անձանցմէ :

Ընտրողական ժողովը 21 հոգիէ կը բաղկանայ, եթէ թաղին մը մէջ վերոյիշեալ անձինքը այս թիւը չը լցնեն, պակասը նոյն թաղին մէջ է՛ն շատ տուրք տուող ընտրողացմէ պէտք է լցնել :

Ընտրողական ժողովին նախագահ՝ եկեղեցւոյն քարոզիչը կամ անոր բացակայութեանը՝ աւագերէցն է. իր դիւանը կը բաղկանայ մէկ ատենապետէ, մէկ ատենադպրէ և երեք քննիչներէ :

Ընտրողական ժողովը թաղական խորհուրդին հետ միանալով կը նախագահէ ընտրական գործողութեանց :

96. Ընտրողական ժողովը ընտրելուց շունչ մը կը պատրաստէ ուղված երեսփոխաններու թիւէն եռապատիկ աւելի՝ ընտրողաց որոշումը դիւրացնելու համար :

Սոյն ցանկն ալ բացադրեալ կը մնայ թաղական խորհրդարանին մէջ, իսկ ընտրողք ո՛չ մէկ կերպով ըստի պեալ են այս ցանկին հետեւելու :

97. Ընտրողական ժողովները ամէն մէկը իր թաղին մէջ՝ ընտրողութեան պայմանները ըստուգելով՝ ընտրելուց շունչ մը պիտի պատրաստեն այբուբենի կարգով : այս ցանկը ութ օր բաց պիտի մնայ թաղական խորհրդարանին մէջ, որպէս զի թաղին ընտրողները կարենան իրենց անուանը վրայ դիտողութիւն ունին նէ՛ ընել :

98. Ընտրողական ժողովը ամէն մէկ ընտրողի մէյմէկ ընտրելու պէտք է տայ սոյն օրինակ :

Ա . . . ընտրող

Ա . . . (անունի դաս)

և ընտրողական ժողովին կողմէն ըստորագրեալ .

Առանց այս ընտրողագիրը ներկայացնելու ոչ ոք պիտի կարենայ քրէտուսիին մերձենալ .

99 . Աթէ ընտրութեան հրաւերը՝ որ և է պատճառով Պատրիարքին կողմէն չ'ըլլայ (տե՛ս Յօդ . 94) . ազգային Արչութեան կողմէն պէտք է որ ըլլայ Քաղաքական ժողովին ատենապետին ձեռօք .

Աթէ ազգային Արչութիւնն ալ զանցառութիւն ընէ իր այս պարտականութիւնը կատարելու , և ընտրութեան համար Սահմանադրութեան որոշած ժամանակը հասած ըլլայ , այն ատեն ընտրողները իրաւունքնին վարելով՝ լիակատար իշխանութեամբ կը ժողվովին իրենց թաղին կամ թեմին եկեղեցւոյն խորհրդարանը և ընտրողական ժողով կազմելով կ'ընտրեն իրենց երեսփոխանները ըստ ընտրական կանոնաց .

Արբոր այս կերպով երեսփոխանաց մեծագոյն մասին ընտրութիւնը լմրննայ , անմիջապէս լուծեալ է ըստ օրինի հին ընդհանուր ժողովը և զուրկ ամենայն իշխանութենէ , ուստի և ինչ որ գործէ կամ գործած է նոյն կէտէն ասդին , ապօրինաւոր է և ապազօր իրարեւ չ'եղեալ .

Քրէտուսիին

100 . Ընտրողաց ցանկին բացվելէն շաբաթ մը ետքը՝ կիլիսիի առաւօտ ժամերգութեան աւարտումէն ետե՛ւ թաղական խորհրդարանին մէջ քուէարկութեան կ'ըսկրսվի սնպէս .

Ընտրողական ժողովին նախագահը ընտրողաց ցանկը ձեռքը առած կարգով կը կոչէ ընտրողները որոնք ընտրողագիրնին կը դնեն սեղանին վրայ և ընտրողաց ցանկին մէջ իրենց անուանը առջև ստորագրելէն ետքը՝

հոն թուղթի մը վրայ քանի երեսփոխան ուղղած է նե՛ այնքան անձի անուն կը գրեն իրենց ձեռքովը վերէն ի վար կարգով և ամեն մէկ անուան առջեւ մականունն, բնակութիւնն, արհեստ նշանակելով՝ թուղթը կը ծաւլեն քուէտուփին մէջ կը ձգեն:

101. Քուէարկութիւնը գաղտնի է. ուստի պէտք է որ քուէարկուք առանձին կերպով մը գրեն իրենց քուէթուղթը, որպէսզի ուրիշ մը չը կարենայ տեսնել գրված անունները:

102. Քուէարկութիւնը ըսկսած օրը պէտք է լմրննայ:

Ընտրողացմէ ո՛վ որ այն օրը քուէարկութեան չը ներկայանայ՝ իրաւունք չ'ունի ետքը բողոքելու:

103. Ոչ ոք պիտի կարենայ միանգամայն երկու թաղի կամ գաւառի մէջ քուէ տալ:

104. Միացեալ թաղերն ու թեմերը՝ եթէ իրարու մօտ ըլլան, մէկ տեղ գալով կ'ընեն քուէարկութիւնը, իսկ եթէ հեռի ըլլան՝ իւրաքանչիւրը զատ զատ քուէարկութիւն կ'ընեն ու ետքը քուէարկութեանց արդիւնքը կը միացնեն:

#### Քուէահամար

105. Քուէարկութիւնը լմրննալէն ետքը՝ նոյն օրը միևնոյն նիստի մէջ ընտրողական ժողովին հսկողութեանը ներքեւ տուփը կը բացվի. քննիչները քուէները կը համրեն և քուէարկուաց թիւին հետ կը բաղդատեն. եթէ տարբերութիւն գտվի կամ եղած տարբերութիւնը աննշան ըլլայ, այսինքն՝ մէկ կամ երկու թիւի (վասնզի կրնայ պատահիլ որ քուէարկուացմէ մէկ կամ երկուքը մոռցած ըլլան ընտրողաց ցանկին մէջ ստորագրելու), քուէարկութիւնը վաւերական կը համարվի. իսկ եթէ երկուքէն աւելի ըլլայ տարբերութիւնը և

ընտրողական ժողովը խարդախութեան կասկած ունեւայ, դարձեալ քուէարկութիւն ընել կ'որոշէ միւս օր մը մինչև առաջիկայ կիրակին:

Վմանապէս եթէ ուզված երեսփոխանաց թիւը չըլլայի առաջին անգամին՝ քննարկելու համար երկրորդ անգամ ընտրութիւն կ'ըլլայ ուրիշ օր մը:

106. Եթէ պատահի որ մէկը պէտք եղածէն աւելի թրուով անուն գրած ըլլայ իր քուէթուղթին մէջ, նոյն թիւէն ետքը եկած անունները անընդունելի են:

Վմանապէս վերէն ՚ի վար կարգով չը գրված անուններուն քուէթուղթը անհամարելի է:

107. Քուէարկուաց թիւին կէսէն աւելի քուէըստացողներուն մէջ է՛ն շատ ըստացող անձինքը երեսփոխան ընտրված են:

108. Եթէ մէկ կամ երկու անգամով առաւելութիւն չ'ըստացվի, ընտրողական ժողովը կը ծանուցնէ է՛ն շատ առաւելութիւն ըստացող երկու անունները, և երրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկու անուանց վրայ կ'ըլլայ:

109. Եթէ հաւասար քուէ պատահի երկու անձանց վրայ, երկրորդը ընտրեալ է:

### Վարչական ընտրութեանց

110. Ըմէն ընտրողական ժողովը իր թաղէն կամ գաւառէն ընտրված երեսփոխանաց անունները Քաղաքական ժողովին կը ներկայացնէ Պատրիարքին ուղեալ տեղեկագրով մը, որոյ մէջ պէտք է ճշգրիտ նշանակված ըլլայ քուէթուղթին օրինակը, այսինքն՝ ընտրեալին անունը, մականունը, բնակութիւնն ու արհեստը և քուէարկութեան բոլոր պարագաները:

Քաղաքական ժողովը՝ քուէարկութեանց տեղեկա-

գիրները քննելով, կ'ըստուգէ երեսփոխանաց իշխանութիւնը:

Մյս ըստուգութենէն ետքը Պատրիարքը պաշտօնական կերպով իմաց կուտայ նորընտիր երեսփոխանաց և կը հրաւիրէ զանոնք ընդհանուր ժողով գումարել որոշեալ օր մը:

111. Ընդհանուր ժողովը իր առաջին նիստին մէջ Քաղաքական ժողովին քննած տեղեկագիրները մտիկ ընելով ընտրութեանց ըստուգութիւնը կը վաւերացնէ և երեսփոխանաց իշխանութիւնը հաստատելով իր կազմութիւնը կը լրացնէ:

112. Ընդհանուր ժողով կրնայ գումարվել երբ երեսփոխանաց մեծագոյն մասը՝ որ Պօլսի մէջ է՝ ընտրոված ըլլայ, առանց սպասելու ընտրութեանց վերջը կամ գաւառական երեսփոխանաց որոնց ընտրութեան լուրը մէկ կողմէն Պօլսի հասնելու վրայ կ'ըլլայ:

113. Աթէ մէկը քանի մը թաղերու կամ քանի մը գաւառներու կողմէն ընտրոված ըլլայ, ինքը կ'որոշէ իր թաղին կամ իր գաւառին երեսփոխանութիւնն ընդունելը: Աթէ ինքը չ'ուզէ որոշել, Ընդհանուր ժողովը վիճակով կ'որոշէ:

Սոյն պարագային մէջ ընտրող թաղին կամ գաւառին իմաց կը տրվի ուրիշ երեսփոխան մ'ընտրել:

Սոյնպէս կ'ըլլայ երբ վախճանման կամ հրաժարման պատճառով երեսփոխանաց մէջէն պակասօր ըլլայ:

114. Ժողովարանին մէջ բացադրեալ պէտք է մնայ երեսփոխանաց ցանկը այբուբէնի կարգով շինված, որոյ մէջ թրւականովը կը նշանակվի անուան առջեւ՝ հրաժարում, վախճանում, և այլն: Մանապէս երեսփոխանաց հետ առաջին և երկրորդ կարգէ անդամակից (Յօդ. 9) եղող անձանց ցանկը: Մյս ցանկերը հինգ տարին անգամ մը կը նորոգվին Ընդհանուր ժողովին նորոգմանը հետ:

Բա հարկին գործածելու համար՝ երեսփոխանաց մէջմէկ տպեալ արտօնելը երեսփոխանութեան պէտք է տրվի սոյն օրինակ .

Ա . . . . Ազգային երեսփոխան

(Ա՛ Քրէստոնք)

(Ըստ արտօնութեան երեսփոխանին)

և ճակատը պատրիարքական կնքով կնքեալ .

Գ. Ընտրութիւն Պատրիարքի

115. Պատրիարքը պէտք է որ Եջմիածնայ Աթոռ ղեկոսէն ձեռնադրեալ կամ անկէ իջը Եջմիածնայ եպիսկոպոս ընդունեալ անձ մ'ըլլայ և Օսմանեան Տէրութեան հարստակ .

116. Արօնական ու Քաղաքական ժողովները խառն ժողով կազմելով ընտրելութեան պայմաններն ունեցող եպիսկոպոսաց և վարդապետաց արժանիքը կը քննեն թէ՛ կրօնական և թէ՛ քաղաքական մասին և կ'որոշեն երեք ընտրելի որոնց անունները Բնդհանուր ժողովին կը ն'րկայացնեն .

Բնդհանուր ժողովին մէջ այն երեք ընտրելի անձանց վրայ դադանի քուէարկութիւնը ըլլալով ո՛ր մեծագոյն մասին հաւանութիւնը ըստանայ՝ անի կ'ըլլայ օրինաւոր Պատրիարք Մեղին .

Եթէ առաջին անգամին մեծագոյն մաս չը վատորկվի, երկրորդ անգամ քուէարկութիւն կ'ըլլայ . եթէ երկրորդին ալ չը յաջողի, երկու առաւելագոյն քուէ ըստացողաց անունները կը ծանուցվի ղիւանին կողմէն և երրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկուքին վրայ կ'ըլլայ .

Եթէ պատահի որ քուէները երկու անձի վրայ հաւասարապէս բաժնրվին, այն ատեն երկուքին մէկը վիճակով կ'ընտրովի .

Եթէ ընտրեալը վարդապետ ըլլայ, անմիջապէս ԼՂ միաժին կը զըրկվի եպիսկոպոս ձեռնադրովելու համար:

117. Ընտրութիւնը ընննալէն ետքը տեղեկագիր մը կը շննվի զոր բոլոր բազմականք կ'ըստորագրեն, և որոյ օրինակը՝ Ընդհանուր ժողովին կնքովը կնքեալ՝ Խառն ժողովին միջնորդութեամբը Բ. Դրան կը մատուցվի որ կ'անուանէ ըզ Պատրիարքը:

118. 'Նորընտիր Պատրիարքը՝ դեռ Բ. Դրան չը ներկայացած՝ Եկեղեցւոյ մէջ և Ընդհանուր ժողովին առջև հանդիսաւոր ուխտ կ'ընէ սոյն օրինակ. « Եռաջի Եստուծոյ և առաջի Եզգիս Հայոց ներկայացեալ ընդհանուր ժողով՝ ուխտեմ հաւատարիմ մնալ Եղեցային Սահմանադրութեան և հսկել բոլոր սրտով նորին անթերի գործադրութեան », .

119. Եթէ Պատրիարքը Սահմանադրութեան դէմ պակասութեան մը մէջ գտվի, ամբաստանութեան տակ կ'ընկնի.

120. Պատրիարքին վրայ ամբաստանութիւն մը կամ ազգային երեսփոխանաց կողմէն, կամ Արօնական ժողովին և կամ Բաղաքական ժողովին կողմէն կրնայ ըլլալ:

Երբ այսպիսի ամբաստանութիւն մը պատահի, Ընդհանուր ժողովը կը գումարվի և իր մէջէն քննիչ յանձնաժողով մը կը կարգէ 21 հոգիէ բաղկացեալ (7 եկեղեցական, 7 թաղական երեսփոխան, 7 գաւառական երեսփոխան) որոնք ամբաստանողաց մէջէն պէտք է որ ըլլան:

Քննիչ յանձնաժողովը ամբաստանութիւնը քննելով, տեղեկագիր կու տայ Ընդհանուր ժողովին որ գաղանի բուէարկութեամբ կ'որոշէ խնդիրը: Եթէ այս որոշումը որ ըստորագրեալ պէտք է ըլլայ որոշման կողմը բուէ տուող ժողովականներէն, Պատրիարքի հրաժարումը վճռած ըլլայ, երկու ժողովոյ ատենա-

պեանները Պատրիարքին կը ներկայացնեն որ յայնժամ  
Եզզին որոշ կամքը տեսնելով հրաժարականը տալու  
պարտաւորեալ է :

121 . Հրաժարեալ Պատրիարքը վիճակաւոր եպիս-  
կոպոսաց կարգը կ'անցնի և ըստ այն կը տնօրինվի Խառն  
ժողովին կողմէն :

### Գ. Ընտրութիւն Առաջնորդաց

122 . Առաջնորդի ընտրութիւնը գաւառական Ընդ-  
հանուր ժողովին մէջ կ'ըլլայ նոյն և նման Պատրիարքի  
ընտրութեան :

Սոյն ընտրութիւնը գաւառական Խառն ժողովին  
միջնորդութեամբ վաւերական տեղեկագրով կը ծա-  
նուցվի Պատրիարքին որ կեդրոնական Խառն ժողովին  
հաւանութեամբը կ'անուանէ զԱռաջնորդը :

123 . Եթէ Առաջնորդը Սահմանադրութեան դէմ  
պահուցութեան մը մէջ գտվի, ամբաստանութեան տակ  
կ'ընկնի Պաւառական ժողովոց կողմէն : և քննութիւնը  
ըստ 120 յօդուածին ըլլալով գատը կեդրոնական Խառն  
ժողովին մէջ կը տեսվի որ ըստ պատշաճին կը տնօրինէ :

### Ե. Ընտրութիւն Ժողովականաց եւ Խորհրդականաց

124 . Ընդհանուր ժողովը կ'ընտրէ Արօնական ու  
Քաղաքական ժողովոց անդամները :

Քաղաքական ժողովը կ'ընտրէ Տեսուչ խորհրդոց  
անդամները բաց ՚ի Պատաստանական խորհրդէն որոյ  
եկեղեցական անդամները Արօնական ժողովը կ'ընտրէ :

Պատաստանական խորհրդին անդամները 40 տա-  
րին լրացուցած և ամուսնացեալ անձինք պէտք է որ  
ըլլան :

Թաղին ընտրողները կ'ընտրեն Թաղական խորհրդ-

դին անդամները թաղին Մնարօղական ժողովին ներկայութեանը, ըստ ընտրական օրինաց:

Սոյնպէս կ'ըլլայ և դաւառներու մէջ ժողովականաց և խորհրդականաց ընտրութիւնը:

125. Մնգհանուր ժողովը հինգ տարին անգամ մը մարտի վերջը կը լուծվի և ապրիլի ըսկիզբը կը նորոգվի:

Արօնական ու Քաղաքական ժողովներն ու Տեսուչ խորհուրդները ամէն տարի մարտի վերջը կիսով չափ միայն կը լուծվին և ապրիլի ըսկիզբը կը նորոգվին (1):

Թաղական ու Թեմական խորհուրդները չորս տարին անգամ մը մարտի վերջը կը լուծվին և ապրիլի ըսկիզբը կը նորոգվին:

Սոյնպէս կ'ըլլայ և դաւառներու մէջ ժողովոց և խորհրդոց նորոգումը:

126. Ազգային երեսփոխաններն ու թաղական և թեմական խորհրդականները անմիջապէս վերընտրել են նոյն պաշտօնին համար: Իսկ Արօնական ու Քաղաքական ժողովոց և Տեսուչ խորհրդոց անդամները՝ որ անմիջապէս վերընտրելի չ'են նոյն պաշտօնին համար, ուրիշ ո՛ր և է պաշտօնի համար վերընտրելի են:

Սոյնպէս է նաև դաւառներու մէջ դաւառական պաշտօնաւորաց վերընտրութիւնը:

127. Ամէն անգամ որ Ազգային ժողովներն ու խորհուրդները նորոգվին, նորընտիր անգամոց ցանկը օրագրի միջոցով պէտք է հրատարակվի:

(1) Առջի անգամին միայն՝ ժողովականաց և խորհրդականաց կէսին լուծումը զիճակով կ'որոշի:

## ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

ԺՈՂՈՎՈՑ ԵՒ ԽՈՐՀՐԴՐՈՑ

## 1. ՊԵՆՏԵԿՈՆԻ ԽՆՆԵՐ

128. Ամեն ժողով և խորհուրդ պէտք է ունենայ ատենական դիւան մը, որ կը բաղկանայ ատենապետէ մը, ատենադպրէ մը և պէտք եղածին չափ փոխանորդներէ զորոնք ժողովն իր մէջէն կ'ընտրէ:

Այն անգամին երիցագուշին ատենապետութեամբ և կրտսերագուշին ատենադպրութեամբ նիստ կ'ընէ և իր դիւանը կը կազմէ:

129. Ատենապետին պաշտօնն է՝ ատենը բանալ և գոցել, ատենին ներքին վարչութիւնը տնօրինել, վեճաբանութիւններն ուղղել, կանոնադրութեանց սրահ պանութեանը հրահել և ատենաբաններուն կարգով խօսք տալ:

130. Ատենադպրին պաշտօնն է՝ ատենին մէջ խօսվածները գրի առնել, եղած որոշումներն ու տրված պատճառաբանութիւնները ճշդիւ նշանակել, և ատենագրութիւնը հետեւեալ ատենին ներկայացնել, և ամեն ատենին խնդիրներու ցանկը պատրաստել առաջնութեան կարգով:

131. Ատենապետի ու ատենադպրի փոխանորդներուն պաշտօնը պիտի ըլլայ անոնց ներկայ չը գտված ատեններուն մէջ զանոնք փոխանակել:

132. Ատենական դիւանը տարին անգամ մը կը նորոգվի և անդամներն անմիջապէս վերընտրելի են:

Բնդհանուր ժողովին դիւանը 5 տարին անգամ մը Բնդհանուր ժողովին հետ կը նորոգվի:

133. Արժնահասն ու Քաղաքահասն ժողովներն ու Տեսուչ խորհուրդները շաբաթն անգամ մը կը գումարվին ի Պատրիարքարան որոշեալ օր մը :

Մտնապետները կրնան ուրիշ օր մը կամ ուրիշ տեղ մը արտաքոյ կարգի ժողով կամ խորհուրդ գումարել ըստիպօղական պարագայի մէջ :

Ընդհանուր ժողովին գումարվելու օրը լրագրի միջոցով պէտք է ծանուցվի գոնէ երեք օր առաջ :

134. Առանց մեծագոյն մասի ներկայութեան նիստը անբաւական կը համարվի և խնդրի մը վրայ վերջին որոշում չը կրնար տրվիլ :

135. Առանց ատենապետի և ատենադպրի ատեան չը կրնար բացվիլ :

Երբ մեծագոյն մասը ներկայ ըլլալով ատենապետը կամ ատենադպիրը և անոնց փոխանորդները ներկայ չ'ըլլան, երիցագունին ատենապետութեամբն ու կրտսերագունին ատենադպրութեամբը կը բացվի ատեան :

136. Ատենապետէն խօսք չը խնդրած և չ'առած ներելի չ'է խօսիլ ատեանի մէջ :

137. Խնդիր մը առաջարկել ու զօղը՝ նախ խնդիրներուն ցանկին մէջ պէտք է գրել տայ խնդիրն ու իր անունը, և երբ կարգը դայ, այն ատեն իրաւունք ունի խօսելու նոյն խնդրին վրայ և ժողովը զանի մտիկ ընելու պարտաւոր է : Այս կարգը այն ատեն միայն կրնայ փոխվիլ՝ երբ ուրիշ խնդիր մը պատահի որոյ ըստիպօղական ըլլալը ժողովն որոշէ :

138. Խնդիր մը լաւ մը քննովելէն, վիճովելէն և անոր վրայ ամենուն կարծիքը առնվելէն ե՛տքը պէտք է որ քրուէի դրվի, և որոշումը ներկայ գտվող անդամներուն մեծագոյն մասին հաւանութեամբը կը տրվի :

139. Երբ ձայները հաւասար դան՝ եթէ նախա-  
դահը ներկայ է՝ նախագահին կողմը կը հակի որոշումը  
եթէ ոչ՝ ատենապետին կողմը :

140. Խառն ժողովին մէջ խնդրի մը որոշում տա-  
լու համար պէտք է որ երկու ժողովները զստ զստ  
քուէարկութիւն ընեն . երբ երկուքին ալ մեծագոյն,  
մասը մի և նոյն որոշումն ըրած ըլլայ՝ խնդիրը կը լուծվի  
խի հակառակ դիպուածի մէջ անհամաձայնութիւն  
կը սեպվի երկու ժողովոց մէջ , և անօրէնութիւնը ինչ-  
հանուր ժողովին կը մնայ ( Յօդ . 1 , 12 ) :

141. Ժողովներուն մէջ որ և է ընտրութիւն ,  
դատաստան , ազգային տուրքի հաստատութիւն ,  
Սահմանադրութեան վերաքննութիւն , գազանի քը-  
ւէարկութեամբ կ'որոշվի . նոյնպէս կ'ըլլայ նաև ուրիշ  
որ և է խնդրի մէջ երբ գազանի քուէարկութիւն պա-  
հանջօղ ըլլայ :

142. Խորհրդոց ատենապետները կրնան մինակ  
կամ ըստ հարկին խորհրդական մ'ալ հետ առնելով  
ուզած ատենին Քաղաքական ժողովին մէջ ներկայա-  
նալ և իրենց խորհրդին վերաբերեալ գործերուն վը-  
րայ խօսիլ , բայց քուէ չ'ունին :

143. Ժողովներու և խորհուրդներու մէջ ամեն  
նիստ իր ատենագրութիւնը պէտք է ունենայ , զոր ներ-  
կայ գտլօղ անդամները կ'ըստորագրեն :

Ինչհանուր ժողովին ատենագրութիւնները Պատ-  
րիարքն ու դիւանին անդամները միայն կ'ըստորա-  
գրեն :

Ինչհանուր ժողովին անդամները ներկայութեան ընթացի-  
մը վրայ կ'ըստորագրեն ժողովարանը մտած ատենին :

144. Եմեն ժողով և խորհուրդ իր տեսչութեան  
կամ մատակարարութեան վրայ տարեկան ընդհանուր  
տեղեկագիր պէտք է որ տայ իր համարառու ժողովին  
կամ խորհրդին :

Սոյն տեղեկագիրը բոլոր անդամոց կողմէն ըստորա-  
գրեալ պէտք է ըլլայ .

145 . Արեք անգամ իրարու վրայ առանց բանա-  
ւոր պատճառ մը գրով իմացնելու ներկայ չը գտվող  
ժողովականին կամ խորհրդականին անունը ատենա-  
գրութեան մէջ կը յիշվի , և ժողովին կամ խորհրդին  
կողմէն ատենապետը անոր կը գրէ չը գալուն պատ-  
ճառը հարցնելու համար . եթէ պատասխան չ'ըն-  
դունի ժողովը , կամ ընդունած պատասխանը զինքը  
գոհ չ'ընէ , երկրորդ գրութեամբ ժողովին դատումը  
կ'իմացնէ անոր և կը յորդորէ որ յաջորդ ատենին  
ներկայ գտվի . եթէ նորէն չը ներկայանայ , այնպիսին  
իր ազգասիրական պարտուցը մէջ զանցառութիւն ըրած  
ըլլալով՝ իր զանցառութիւնը հրաժարական կը սեպվի .  
եթէ այսպիսեաց թիւը մինչև 3 հասնի , ժողովին նա-  
խագահը կամ ատենապետը անոնց տեղ զանոնք ընտրող  
ժողովէն ուրիշ անդամներ կը խնդրէ (1) .

Սոյնը պէտք ընէ երբ նոյն թրւով ժողովականք  
կամ խորհրդականք պահսին թէ՛ վախճանման և թէ՛  
հրաժարման պատճառով .

## Գ Լ ՈՒ Խ Ե .

### ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

146 . Սահմանադրական ժողովով որոշեալ Ազ-  
գային Սահմանադրութիւնը առաջին անգամ առ ժա-  
մանակեայ ընդհանուր ժողովով կ'ընդունվի ու կ'ըս-  
տորագրվի , և յետոյ սահմանադրականապէս կազմեայ  
Ընդհանուր ժողովը դարձեալ ըստորագրելով՝ Ազգին  
կողմէն կը վաւերացնէ զանի և վճռաբար կը հաստատէ .

1 Այս արտագրութիւնը Ընդհանուր ժողովին վերաբերեալ է .

Սահմանադրութեան ըստորագրեալ բնագիրը ազգային Դիւանատան մէջ կը պահվի և օրինակը տպագրութեամբ կը հրատարակվի :

147. Եզգային Սահմանադրութիւնը ազգովին ընդունվելէն ետքը՝ Եզգին որոշ ու յայտնի կամքը կը սեպվի, և անոր պարունական տրամադրութիւնքը անփոփոխելի են ազգային Աւարչութեան կողմէն :

Իսկ երբ ազգային Աւարչութիւնը Սահմանադրութեան գործադրութեանը մէջ երկար փորձով ինչ ինչ յօդուածներու փոփոխութեան պէտք տեսնէ, ինք միշտ համեմատ վարվելով անոնց, իր ընթացքին երրորդ տարւոյն վերջերս միայն քննութեան առաջարկութիւն կրնայ ընել Ընդհանուր ժողովին :

148. Երբ Ընդհանուր ժողովը վերաքննութեան առաջարկութիւնը ընդունի, Աւերաքննութեան ժողով մը կը կազմէ սա՛ կերպով :

Արօնական և Քաղաքական ժողովներէն չորսական հոգի, Տեսուչ խորհուրդներէն երեքական հոգի, և ասոնցմէ դուրս 10 հոգի զոր Ընդհանուր ժողովը իր մէջէն կամ դուրսէն կ'ընտրէ, ընդ ամէնը 30 հոգի :

149. Աւերաքննութեան ժողովը ազգային Աւարչութեան կողմէն եղած զիտօղութիւնները միայն քննութեան տակ աւնելով, պէտք եղած փոփոխութիւնները կ'որոշէ և Պատրիարքին միջնորդութեամբը Ընդհանուր ժողովին կը ներկայացնէ :

150. Սահմանադրութեան վերաքննութիւնը Եզգին համար անընդունելի է, երբ հիմնական ըսկզբանց տրամադրութեանցը համաձայն չ'ըլլայ, այն ըսկզբանց որով ապահովեալ են Եզգին իրաւունքները, իրաւունք որոնց վրայ Եզգն անգամ չ'ունի իշխանութիւն տնօրէնութեան լի միանգամայն պարտիք են :

**ՊՕԼԻՍ**

	Թաւ	Երեւոյ	Երեւոյ
1	Գաւազնաւոր	Մայր Եկեղեցի . . . . .	24
2	”	Ս. Յարութիւն . . . . .	2
3	Սէտիկիաշա	Ս. Յովհաննէս . . . . .	6
4	Եէնիքաբու	Ս. Թաղէոս և Տարթուզ . . . . .	4
5	Սամաթիա	Ս. Գէորգ . . . . .	15
6	”	Ս. Յակոբ . . . . .	1
7	{ Կառլո գաւոր Մաքրի գեղ Եւ Ստեֆան Եւ Եօրկի	Ս. Յովհաննէս	} . . . . . 2
		Ս. Ստեփան	
		Ս. Եստուածածին	
		Ս. Եստուածածին	
8	Թօսիքաբու	Ս. Երկողայոս . . . . .	2
9	Քարակէօմբիւկ	Ս. Յ. Ոսկերբերան . . . . .	1
10	Պալատ	Ս. Հրեշտակապետ . . . . .	15
11	Եւրուպ	Ս. Եստուածածին . . . . .	1
12	”	Ս. Եղիա . . . . .	1
13	Խասգիւղ	Ս. Ստեփան . . . . .	15
14	Քասաբնիաշա	Ս. Յակոբ . . . . .	1
15	{ Երա Գալաթիա	Ս. Երրորդու թիւն } . . . . .	17
		Ս. Լուսաւորիչ	
16	Պէշիկթաշ	Ս. Եստուածածին . . . . .	10
17	Օրթագիւղ	Ս. Եստուածածին . . . . .	14
18	{ Քորուչէշմէ Հիսար Միկիւն Երրգիւղ	Ս. Խաչ	} . . . . . 5
		Ս. Սանդուխտ	
		Ս. Երեք մանկունք	
		Ս. Եստուածածին	
19	{ Պէյքօղ Քանտիլի	Ս. Հռիփսիմէ	} . . . . . 1
		Ս. Երկողայոս	
20	{ Քուզկունճուք և Իճասիէ	Ս. Լուսաւորիչ . . . . .	2
		Ս. Կարապետ . . . . .	8
22	{ Եւ մտաղ Եւ Եւստի	Ս. Խաչ } . . . . .	11
		Ս. Եւստի	
23	Քաղկեդոն	Ս. Թաղաւոր . . . . .	1
24	Քարթալ	Ս. Եւստի . . . . .	1

ԳԱԻԱՌՔ

Արմենացիացի	Երեւելիանացի
1 Երուսաղէմ . . . . . 1	
2 Եգիպտոս . . . . . 1	
3 Իերիւս . . . . . 1	
4 { Կիւրոս } . . . . . 1	
{ Տարսոն }	
{ Սիւ }	
5 Մարաշ . . . . . 1	
6 Նաճիւն . . . . . 1	
7 Օւթուն . . . . . 1	
8 Ետանա . . . . . 1	
9 Եդեսիա . . . . . 1	
10 Տիգրանակերտ . . . . . 1	
11 Քիւրտիստան . . . . . 1	
12 Պաղտատ . . . . . 1	
13 Բաղէշ . . . . . 1	
14 Սան . . . . . 3	
15 Եղթամար . . . . . 1	
16 Կարս . . . . . 1	
17 Մուշ . . . . . 2	
18 Երզնկա . . . . . 1	
19 Բաբերդ . . . . . 1	
20 Կարին . . . . . 2	
21 Քարբերդ . . . . . 3	
22 Երազկեր . . . . . 1	
23 Բալու . . . . . 1	
24 Գեղի . . . . . 1	

Արմենացիացի	Երեւելիանացի
25 Եկն . . . . . 1	
26 Տիգրիկ . . . . . 1	
27 Մալաթիա . . . . . 1	
28 Կիւրին . . . . . 1	
29 Ենթէպ . . . . . 1	
30 Քիլիս . . . . . 1	
31 Շապին քարահասար . . . . . 1	
32 Սերաստիա . . . . . 2	
33 Եւդոկիա . . . . . 1	
34 Մարաբլան . . . . . 1	
35 Եմասիա . . . . . 1	
36 Տրապիզոն . . . . . 1	
37 Ճանիկ . . . . . 1	
38 Եօզղատ . . . . . 1	
39 Կեսարիա . . . . . 2	
40 Գաղատիա . . . . . 1	
41 Կուտինա . . . . . 1	
42 Օմիւռնիա . . . . . 1	
43 Պրուսա . . . . . 1	
44 Պանտրոմա . . . . . 1	
45 Կիկոմիդիա . . . . . 3	
46 Ռօտոսլո . . . . . 1	
47 Եդրիանուպոլիս . . . . . 1	
48 Սալաքիա . . . . . 1	
49 Մոլտապիա . . . . . 1	
50 Սառնա . . . . . 1	

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՆԴԱՄՔ

ԿԱՐԱՊԵՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՍԵՔԱՍՏՈՑ

Տ. ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅ

ԽԱՍԳԻՒՂԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՑ

ՂԱԼԱԹԻՈՑ

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ

ՓԱՓԱՋԵԱՆ

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀԱՆԱՅ

ՀԻՒՆՔԵԱՐՊԵՑԷՆՏԵԱՆ

ԱԼԹՈՒՆ ՏԻՒՐԻ

ԱՇՆԱՆԵԱՆ Պ.

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. Ս.

ՄԻՍԱՔԵԱՆ Վ.

ՍԻՒՐԷՆԵԱՆ Յ.

ՓԷՇՏՐԱԼՃԵԱՆ Ս.

ՔՈԹԻԿԵԱՆ Բ.

ԱՂԱԹՕՆ Մ.

ԵԱՂՈՒՊԵԱՆ Ե.

ՄԻՆԱՍ Մ.

ՌՈՒՍԻՆԵԱՆ

ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ Ե.

ՔԱՅՍԷՐԵԱՆ Թ.


ՕՏԵԱՆ Գ. Ա.

Ղայաթիա 20 մայիս 1860.

**Եզգային Մեղհանուր Ժողովին միաձայն  
հաւանուքն ընդունված և ըստորագրված :**

**Կ. Պօլիս, Ի Պատրիարքարան Հայոց .**

**24 Մայիս 1860 :**





Գին 5 զրուշ

Մեխականու թիւն աղգային մատուկին :